

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Posted on January 21, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



## **Կազմկոմիտե, Երեւան, 19 Սեպտեմբեր 2009**

2009 թ. Սեպտեմբեր 18-19 Երեւանի մէջ կայացաւ Կազմակերպչական Կոմիտեի հերթական 11-րդ նիստը: Նիստին մասնակցեցան Կոմիտեի անդամները Ֆրանսայէն, ԱՄՆ-էն, Չուիցերիայէն, Աւստրիայէն, Հայաստանի Հանրապետութենէն եւ Ռուսաստանէն: Անոնք քննարկեցին Կոմիտեի նախորդ նիստէն ետք կատարուած գործունեութեան արդիւնքները՝ առնչուած Համագումարի նախապատրաստական աշխատանքներուն հետ, նպատակ ունենալով Համագումարը կայացնել ոչ ուշ քան 2010 թ Նոյեմբերին Փարիզի (Սելրի) մէջ: Մանրամասնութիւնները պիտի յստակացուին յաջորդ նիստին, որ պիտի կայանայ Ժընեւի մէջ 18-19 Դեկտեմբեր 2009-ին: Կազմակերպչական Կոմիտեն անգամ մը եւս կը հաստատէ Նախաձեռնող խումբի Ուղերձի հայեցակարգային դրոյթները, որոնք հրատարակուած են 2006 թ. հայկական զանգուածային լրատուական միջոցներու մէջ (Երեւանի մէջ՝ ‘Հայաստանի Հանրապետութիւն’ շոկտեմբեր 25-ին, ‘Կոլոս Արմենի’ շոկտեմբեր 31-ին, Լոս Անճելոսի մէջ ‘Նոր Կեանք’ Նոյեմբեր 16-ին, Փարիզի մէջ ‘Europe and Orient’ N 3, Կազմակերպչական Կոմիտեի Յայտարարութիւնը ‘Հայաստանի Հանրապետութիւն’ 2007-ի Յունուար 16-ին, եւ այլն), եւ որոնցմէ հիմնականներն են՝

- Միասնական հայ ժողովուրդի՝ համայն հայութեան երկու հատուածներու՝ Հայաստանի Հանրապետութեան Արցախի հետ եւ Սփիւռքի՝ արեւմտահայերու (Օսմանեան կայսրութեան հայ քաղաքացիներու ժառանգներու) միջեւ դերերու բաշխումը, աշխատանքներու բաժանումն ու համաձայնեցուած փոխգործակցութիւնը այն հիմնական պայմաններն են, որոնք կրնան ապահովել Հայկական Հարցի յաջող եւ արդիւնաւետ լուծումը՝ անոր արեւելահայկական եւ արեւմտահայկական դրոյթներով:

### **Արեւելահայկական տեսակետ (ՀՀ, Արցախ, Նախիջեւան, Կարս, Ճաւախք)**

- Հայաստանի Հանրապետութեան Արցախի հետ յարաճուն, կայուն եւ անվտանգ զարգացում, ժողովուրդի կենսամակարդակի աճ, երկրին մէջ ժողովրդավարական եւ ազատական գաղափարներու իրական կենսագործում, հայենադարձութիւն, դրացիներու հետ յարաբերութիւններու բարելաւում, համաշխարհային հանրութեան մէջ երկրի ներգրաւում, եւ այլն:
- Հասնիլ այն բանին, որ համաշխարհային հանրութիւնը ճանչնայ Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու իրաւունքը, որ ոտնահարուած է անոր մասնատմամբ 1920 թ. Խորհրդա-թրքական արշաւանքներու հետեւանքով եւ ամրագրուած է 1921 թ. Մարտի 16-ին եւ Խորհրդա-թրքական պայմանագրով եւ Յուլիս 5-ի եւ 7-ի Ռուսաստանի Կոմունիստական (պոլշեւիկներու) Կուսակցութեան (ՌԿ(Բ)Կ) Կովկասեան պիւրոյի որոշումներով:
- Արցախի ազատագրուած տարածքներու իրաւական (տէ ետլրէ) միացումը Հայաստանի Հանրապետութեան հետ:

### **Արեւմտահայկական տեսակետ (Արեւմտեան Հայաստան, Կիլիկիա, տարագիր)**

**Արեւմտահայութիւն)**

- Հիմնել Արեւմտեան Հայաստանի՝ Մեծ Եղեռնէն փրկուած արեւմտահայերու (Օսմանեան կայսրութեան հայ քաղաքացիներու ժառանգներու ) Լիազօր Ներկայացուցչական մարմիններ (Արեւմտահայոց Ազգային Ժողով, Արեւմտահայոց Ազգային Խորհուրդ)՝ միջազգային կազմակերպութիւններու մօտ իրենց շահերը անմիջականօրէն ներկայացնելու եւ օրինական իրաւունքները պաշտպանելու համար, կապեր հաստատելու թրքական իշխանութիւններու հետ, բանակցութիւններ վարելու շահագրգիռ այլ կողմերու հետ՝ Հայոց Ցեղասպանութեան փաստի միջազգային ճանաչման, դատապարտման, հասցուած բարոյական, նիւթական եւ տարածքային վնասը հատուցելու համար, եւ այլն:
  - Հասնիլ այն բանին, որ Օսմանեան կայսրութեան հայ քաղաքացիներու ժառանգները կարողանան անարգել եւ անվտանգ վերադառնալ իրենց հայրենիքը եւ կամ ըստ իրենց ցանկութեան ստանալ վնասուց հատուցում:
  - Փրկել, պահպանել եւ զարգացնել արեւմտահայերու ազգային ինքնագիտակցութիւնը, լեզուն եւ ակամայայտութիւնները:
  - Պահպանել եւ վերականգնել հայկական ճարհարապետութեան եւ մշակոյթի յուշարձանները Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ մէջ եւ ժամանակակից Թուրքիոյ այլ տարածքներուն վրայ, եւ այլն: Համայն հայութեան կարողութիւններու եւ ջանքերու միաբանումն ու գործունէութիւններու համաձայնեցումը հնարաւոր կը դառնան պաղ պատերազմի ակարտէն ետք, յետխորհրդային ազատութիւններու եւ վերականգնուած հայկական պետականութեան պայմաններուն տակ, հայոց ժամանակակից ազգային-պետական քաղաքական մտածողութեան ձեւաւորման գործընթացին շնորհիւ: Համաշխարհային հայութեան հաւաքական կամքի եւ միտքի, անոր ներուժի ծրագրուած եւ արդիւնաւետ օգտագործումը համահայկական նպատակներու իրագործման համար կը յանգեցնէ միջազգային կեանքի մէջ ինքնուրոյն հայկական գործօնի ձեւաւորման, ինչ որ հնարաւորութիւն կ'ընձեռէ հայ ժողովուրդին ինքնուրոյն կերպով տնօրինելու իր ճակատագիրը, պայմաններ կը ստեղծէ անոր անվտանգ եւ հեռանկարային զարգացման համար:
- Կազմկոմիտեի Նախագահ՝  
Անուշաւան Դանիելեան Կազմկոմիտեի Գործադիր Տնօրէն՝  
Կարէն Միքայէլեան

